ՀԻՆ ԹՐԱԿՅԱՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՏԱՐՐԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՎԱՆԱՆԴՈՒՄ

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ուրարտական արձանագրությունները մ. թ. ա. IX դ. վերջից սկսած բազմիցս հիշատակում են էթիունի ցեղամիությունը՝ իր մեջ մտած առանձին ցեղային երկրներով հանդերձ։ Այդ ցեղամիությունը զբաղեցնում էր այժմյան Կարսագետի (Կարսաչայ) ակունքների շրջանից մինչև Սևանա լճի ափամերձ շրջանները ձգված մի ընդարձակ տարածություն[1]։ *Ուրարտական արձանագրությունների հաղորդած տվյալներից պարզվում է, որ էթիունիի մեջ մտած մյուս ցեղային երկրների համեմատությամբ առանձնահատուկ դիրք ուներ Իգանի (Իյանի) երկիրը, որը տեղադրվում է հետագա Վանանդի հյուսիսային կեսում՝ հիմնականում այժմյան Զըլդըր լճի շրջակայքում*[2]։ *Այս առումով հատկապես ուշագրավ է հետևյալ փաստը. էթիունիի թագավոր Դիուծինին՝ ուրարտական Սարդուր II (764—735 թթ. մ. թ. ա.) արքայի ժամանակակիցը, ուրարտացիներին հայտնի էր* Diusini Iganiehi *(այսինքն՝ Դիուծինի Իգանեցի) անվամբ*[3]։

Նշված փաստի հետ միասին նկատի առնելով ռազմական դեմոկրատիայի վերջին փուլը թևակոխած ցեղամիություններին բնորոշ «արքայական ցեղի» ինստիտուտը[4] *և նրա հնարավոր գոյությունը Հայկական լեռնաշխարհի ցեղամիությունների ներսում, կարող ենք ենթադրել, որ Իգանին եղել է էթիունի ցեղամիության «արքունի երկիրը»*[5] *և բնակեցված է եղել ուրարտացիներից* iganiehi *(այսինքն՝ «իգանեցի», «իգանիական») հորջորջված «արքայական ցեղի» կողմից։*

---

[1] Б. А. Тураев, История Древнего Востока, часть II, СПб., 1912, стр. 46; *Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 208,* Гр. Капанцян, Историко-лингвистические работы. т. II, Ереван, 1975, стр. 71—76; Г. А. Меликишвили, Наири-Урарту, Тбилиси, 1954, стр. 56; Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, стр. 70; Н. В. Арутюнян, Биайнили (Урарту), Ереван, 1970, стр. 20.

[2] *Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 208, Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 171, 178,* Гр. Капанцян, Историко-лингвистические работы, т. II, стр. 72—73, *Ս. Տ. Երեմյան, «Ուրարտուի պետությունը և հարևան երկրները մ. թ. ա. 8—7-րդ դդ.» քարտեզը («Հայկական ՍՍՌ ատլաս», Երևան—Մոսկվա, 1961, էջ 102), Ս. Տ. Երեմյան, «Ուրարտուի պետությունը (870—590 թթ. մ. թ. ա.)» քարտեզը («Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971),* Н. В. Арутюнян, *նշվ. աշխ., էջ 189, 418—420։*

[3] IDiuşini Iganieni LUGA'L KUREtiuhi KURebanie... *(տե՛ս* Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи *(այսուհետև՝* УКН), М., 1960, 155 С, *տող 51—52։*

[4] *Հմմտ. «արքայական սկյութներին» հյուսիսսևածովյան սկյութների ցեղամիության մեջ, Արշակունիների «արքայական» ապառն ցեղին՝ դահլանի, ասիաններին՝ թոխարականի մեջ։*

[5] *Իգանիի ոչ փոքր երկիր լինելու իրողությունը պարզվում է Սարդուր II-ի թողած այն արձանագրությունից, որի մեջ խոսվում է այս երկրում ուրարտացիների ավերած 35 բերդերի և 200 բնակավայրերի մասին* (УКН, 155 F, *տող 7—10)։*

Իգանի երկրի բնակչության վերնախավի (իշխող տարրի) էթնիկական պատկանելության պարզաբանման գործում կարևոր ծառայություն է մատուցում Diusini անձնանունը, որը, ինչպես տեսանք, կրում էր էթիունիի ծագումով իգանեցի թագավորը։ Իգանիական այս անձնանունը բացահայտորեն նույնական է թրակիական Diuzenes (=հուն. Διογένης) անձնանվան հետ[6]։ Թրակիական և հունական անձնանունների առաջին բաղադրիչները (Diu., Διο-) հ.-ե. մի շարք լեզուներում պահպանված նախալեզվի *diu̯- «աստված, երկինք, օր» բառից են[7], իսկ երկրորդները (-zenes,-γενης)՝ սերում են հ.-ե. *g'en- «ծին, ծնել» արմատից[8]։

Թրակիական Diuzenes անձնանվան diu- բաղադրիչը բուն թրակերենում ունենալու էր *tiu- տեսքը, քանի որ բուն թրակերենում հայերենի նման տեղի էր ունեցել հ.-ե. d>թրակ. t անցումը (հմմտ. հ.-ե. *diu̯->հայ. տիւ)։ Դ. Դեչևի կարծիքով, այս և նման դեպքերում գործ ունենք Δια-, Διο-, Διος- բաղագրիչները պարունակող հունական անձնանուններից եկող ազդեցության հետ[9]։ Սակայն, ելնելով Վ. Գեորգիևի դիտողություններից, դա կարելի է բացատրել նաև թրակիական անձնանվան առաջին բաղադրիչը կազմող diu- (<հ.-ե. *diu̯-) բառի դակա-միսիական ծագմամբ[10], քանի որ, ի տարբերություն բուն թրակերենի, դակա-միսիերենում տեղի չի ունեցել d>t անցումը։

Դեռևս Գր. Ղափանցյանն էր մատնանշել Diusini (բառացիորեն՝ «աստվածածին, աստվածային ծնունդ») անվան առաջին diu- բաղադրիչի կապը իրանական նույնարմատ dēva և երկրորդ -sini- բաղադրիչի կապը հայերեն ծին (<հ.-ե. *g'en-) բառերի հետ[11]։ Դժվար չէ նկատել, որ Diuşini անվան բաղադրիչները իրենց հնչյունական տեսքով ավելի մոտ են կանգնած դակա-միսիական, թրակիական և հայկական համապատասխան բառերին, քան իրանականին կամ հունականին։ Ըստ այսմ, Diuşini անվանը ծնունդ տված միջավայրը անվարան կերպով կարող ենք համարել հին թրակյան այն ընդհան-

---

6 Սրա հետ են իրենց առաջին բաղադրիչներով առնչվում, օրինակ, թրակիական Διον-κεῖλας, Dio-panes, Dios-cuthes, Διας-κενθος անձնանունները, իսկ երկրորդ բաղադրիչներով՝ Αυλου-ζενης, Βρι-ζενις, Der-zenus, Επτε-ζενις, անձնանունները (Д. Дечев, Характеристика на тракийския език, София, 1952, стр. 30, 31, 32).

7 Սրանից են սերում հայ. տիւ, ավեստ. daēva «դև», հին հնդկ. dēvas, լատին. deus, լիտվ. dievas, լատիշ. dievs «աստված», հուն. δῖος «աստվածային», հին իսլ. tīvar «աստվածներ» բառերը (Д. Дечев, նշվ. աշխ., էջ 9, ծան. 4, Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 74—75, Գ. Բ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ, 20, 62, М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. I, М., 1964, стр. 513).

8 Հմմտ. հայ. ծին (ծն-ունդ), հուն. γένος, լատին. genus, հին հնդկ. jana-ḥ «տոհմ», ավեստ. zana «ցեղ» բառերը (Д. Дечев, նշվ. աշխ., էջ 12, В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, стр. 120. Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 56—57, Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 58)։

9 Д. Дечев, նշվ. աշխ., էջ 9, 32։

10 В. Георгиев, նշվ. աշխ., էջ 133։ Հետաքրքիր է, որ թրակերեն οιν, Διν («օր», Զևս») նույնածագում բառը ևս չի ենթարկվել հիշյալ օրինաչափությանը։ Այս և նման երևույթները հետևանքներն են բալկանյան հին լեզուների (մասնավորապես բուն թրակերենի և դակա-միսիերենի) ունեցած երկարատև փոխազդեցությունների (դրանց վերաբերյալ տե՛ս В. Георгиев, նշվ. աշխ., էջ 133, 143—144)։

11 Гр. Капанцян, Историко-лингвистические работы, т. II, стр. 77.

ությանմասը, որի մեջ մտնում էին նաև հայերի, թրակիացիների և դակերի լեզվական նախնիները[12]։

Հին թրակյան էթնիկական տարրը մ. թ. ա. II հազարամյակում և I հազարամյակի սկզբին զբաղեցնում էր ոչ միայն Բալկանյան և Փոքրասիական թերակղզիները, այլև արդի Ուկրաինայի հարավը և արևմուտքից ու հարավ-արևելքից նրան հարող շրջանները։ Գիտությանը հայտնի են մերձազովյան շրջաններում «թրակիա-կիմերական» ցեղերի երբեմնի գոյությունը հաստատող մի շարք տվյալներ[13]։

«Թրակիա-կիմերական» ցեղերի առանձին հատվածների՝ Կովկասյան լեռնանցքները հաղթահարելն ու Հայկական լեռնաշխարհ թափանցելը սկսվել էր ավելի վաղ ժամանակներում, քան կիմերների գլխավորությամբ դեպի Փոքր Ասիա, Միջագետք և Իրան մ. թ. ա. VIII—VII դդ. նրանց ձեռնարկած պատմական ներխուժումները։ Հայտնի է, որ դրանք տեղի էին ունենում Անդրկովկասի և Հայկական լեռնաշխարհի վրայով[14]։ Ինչպես ներխուժումների այս վերջին ալիքի, այնպես էլ նախորդների հետևանքը եղավ այն, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիս-արևելյան մասերում մշտական բնակություն հաստատեցին եկվոր «թրակա-կիմերական» ցեղերի՝ կիմերների, տրերների, սարապարների և նրանց մյուս ցեղակիցների առանձին հատվածներ[15]։

Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում «թրակա-կիմերական» ցեղերի բնակության փաստն արտացոլվել է թե՛ ժամանակի սեպագիր աղբյուրներում, թե՛ հետագայի հույն հեղինակների երկերում։ Դրանցից կիմերները այստեղ (հետագա Գուգարքում և հարակից շրջաններում) հիշատակվում են արդեն ասորեստանցի հետախույզ Աշշուրբանիպալի զեկույցի մեջ

---

12 Հավանաբար, նույնը պետք է ասել նաև իգանիական արքաներից մեկի կրած Qa-puri- (< *Qa-puri-) անվան վերաբերյալ։ Սրա -puri- բաղադրիչը կարելի է նույնացնել թրակյան այնպիսի անձնանունների երկրորդ բաղադրիչների հետ, ինչպիսիք են. Αὐλου-πορις, Δεος-πουρις, Μυca-por, Μουκα-πουρεις և այլն։ Բերված թրակյան անձնանունների երկրորդ բաղադրիչները սերում են հ.-ե. *per- «ծնել» արմատից (Д. Дечев, նշվ. աշխ., էջ 40)։

13 Л. А. Ельницкий, Киммерийцы и киммерийская культура («Вестник древней истории», 1949, № 3, стр. 14—18); Ю. С. Крушкол, К вопросу о киммерийцах («Археология и история Боспора», Симферополь, 1952, стр. 89—91); А. А. Иессен, К вопросу о памятниках VIII—VII вв. до н. э. на юге европейской части СССР («Советская археология», XVIII, 1953, стр. 100—110); Е. И. Крупнов. Киммерийцы на Северном Кавказе («Древние племена и народности Кавказа», Материалы и исследования по археологии СССР, № 68, М.—Л., 1958, стр. 176—195); М. И. Артамонов, Киммерийцы и скифы, Л., 1974, стр. 20—23.

14 Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 6—10, 13; М. И. Артамонов, Вопрос о происхождении скифов («Вестник древней истории», 1950, № 2, стр. 47); И. Л. Лавров, О пути вторжения киммерийцев в Переднюю Азию («Советская археология», 1965, № 3, стр. 219—223).

15 Strabo, XI, 5, 2, XI, 14, 14, Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 6—13, 30, Ս. Տ. Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 90—92), Ս. Գ. Պետրոսյան, Թրակա-կիմերական ցեղերի միությունները Հայկական լեռնաշխարհում (մ. թ. ա. VI—V դդ.), «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1, էջ 207—219։

(թվագրվում է մ. թ. ա. 722—715 թթ.)[16]։ Տրերների մի հատվածը նույնպես հաստատվել էր հետագա Գուգարքի տարածքում՝ կենտրոնացած լինելով հիմնականում նրա հյուսիսային շրջաններում։ Այս իրողությունն արտացոլվել է տրերների ցեղանունը պահած Թրիարե երկրի մասին Պլինիոսի հաղորդած տեղեկության մեջ[17]։ Այս երկիրը թե՛ անվամբ, թե՛ տեղադրությամբ համընկնում է Թռեղքի՝ Գուգարքի հյուսիսային գավառներից մեկի հետ[18]։ Ավելի հարավ՝ հետագա Շիրակում և Արշարունիքում, բնակված «Թրակիա-կիմերական» ցեղերից Ստրաբոնին հայտնի էին սարապարները, իսկ նրանցից հյուսիս-արևմուտք՝ գլխավորապես հետագա Վանանդի տարածքում, այնիանները։

Քանի որ մեր շոշափած թեման անմիջապես առնչվում է վերջիններիս, ուստի անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Հայկական լեռնաշխարհում սրանց երբեմնի բնակության վերաբերյալ Ստրաբոնի թողած հետևյալ տեղեկությունը. «Պատմում են, որ այնիանների մի մասը բնակվում է Ուիտիայում, իսկ մյուս մասը Արմենիայից վերև՝ Աբոսի ու Նիբարոսի հետևում (սրանք Տավրոսի մասերն են), որոնցից Աբոսը մոտ է այն ճանապարհին, որ տանում է Բարիսի տաճարի մոտով Եկբատանա։ Ասում են, որ նաև Թրակիացիներից ոմանք, որ անվանվում են սարապարներ, այսինքն՝ գլուխ կտրողներ (κεφαλότομοι) ապրում էին Արմենիայից վերև և հարևան էին գուրանիացիներին (Γουράνιοι) և մեդացիներին...»[19]։

Աբոս և Նիբարոս լեռներ ասելով Ստրաբոնը (ավելի ճիշտ նրա աղբյուրը) նկատի ուներ կամ Հայկական Պար լեռնաշղթան ընդհանրապես, կամ նրա ամենաբարձր զույգ գագաթները՝ Մեծ ու Փոքր Մասիսները[20]։ «Արմենիայից վերև՝ Աբոսի ու Նիբարոսի հետևում»[21] բնակված այնիաններին Ն. Ադոնցը տեղադրում էր Շիրակի Անի բնակավայրի շրջակայքում[22]։ Հ. Մանանդյանը, ընդունելով հանդերձ այնիանների բնակության շրջանի այսպիսի տեղադրությունը, իր հերթին ավելացնում էր հետևյալը. «Ըստ երևույթին, սրանք (այնիանները—Ս. Պ.) ևս եկել էին հարավ կիմմերական և սկյութական արշավանքների ժամանակ 8—7-րդ դարերում մեր թվականությունից առաջ Մեոտիս-կողքիսյան և Դերբենդի ճանապարհներով։ Սրանց մի մասը բնակություն

---

16 И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, стр. 235—236; Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 231—232։

17 Plin., Nat. Hist., VI, 11.

18 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 315, ծան. 2, Ս. Տ. Երեմյան, Ն. Մառը և VII դարի հայոց «Աշխարհացույց»-ը («Մառը և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 82)։

19 Strabo, XI, 14, 14, Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 11։

20 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 320, ծան. 3. Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 57։ Պետք է նկատի առնել, որ, հավանաբար, մ. թ. ա. 520 թ. սկսած Հայկական Պար լեռնաշղթայով էին միմյանցից սահմանազատվում Հայկական լեռնաշխարհի արևմտյան երկու սատրապությունները՝ 13-րդը (արմենականը) և 18-րդը (մատիենա-սասպեյրա-ալարոդյանը)։ Ընդ որում, սրանցից առաջինը՝ բուն Արմենիան, ներառում էր լեռնաշխարհի արևմտյան և հարավային կեսը, իսկ երկրորդը՝ հյուսիսայինն ու արևելյանը (տե՛ս Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը և Փոքր Ասիան ըստ Քսենոփոնի «Անաբասիս»-ի քարտեզը, Քսենոփոն, Անաբասիս, Երևան, 1970)։

21 Հետաքրքրական է, որ բերված հատվածում սարապարների բնակության շրջանը ևս Ստրաբոնը ցույց է տալիս «Արմենիայից վերև»։ Իսկապես էլ, բոլոր ուսումնասիրողները «Թրակիական» այս ցեղը տեղադրում են հետագա Շիրակի (մասամբ էլ Արշարունիքի) տարածքում, այսինքն՝ ճիշտ «Արմենիայից վերև»։

22 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 56—57, 420.

էր հաստատել Ուտիքում, մի մասը՝ Շիրակում, իսկ մի մասն էլ կիմմերների մի ստվար հատվածի հետ անցել էր Ուրարտուի միջով Փոքր Հայքի կողմերը և հաստատվել Դարանաղիում՝ Անի-Կամախի շրջանում»[23]։

Այնիանների բնակության շրջանը, սակայն, ներառել է ոչ թե հետագա Շիրակն ամբողջությամբ, այլ, ըստ երևույթին, նրա հյուսիս-արևմտյան մասը միայն[24]։ Հայտնի է, որ դեռևս ուրարտական ժամանակաշրջանում հետագա Շիրակի արևելյան կեսը և հարավ-արևմտյան մասը մտնում էին ուրարտական արձանագրություններում Eriahi կոչված երկրի մեջ[25]։ Որ հյուսիս-արևմտյան Շիրակը ժամանակին բնակեցված է եղել այնիանների կողմից, ցույց է տալիս նրանց ցեղանվան հետ ծագումնաբանական կապի մեջ գտնվող տեղական Անի բնակավայրի (Ախուրյանի աջ ափին) անունը[26]։

Ինչպես նշվեց, այնիանները բնակվել են ո՛չ միայն հյուսիս-արևմտյան Շիրակում։ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասում նրանց բնակության հիմնական շրջանը գտնվել է հարևան Վանանդում։ Այս առումով խիստ հետաքրքրքրական է այնիան ցեղանվան և Իգանի (Իյանի) երկրանվան ծագումնաբանական կապվածության իրողությունը։ Բայց, նախ, միևնույն երկրանվան զույգ՝ Իգանի և Իյանի, տարբերակների մասին։ Հայտնի է, որ ուրարտական գրության մեջ j (i) հնչյունը կարող էր արտահայտվել նաև g-ի միջոցով (ji=gi, je=ge, ju=gu)։ Ըստ այսմ, I-ga-ni=I-ja-ni (=I-ia-ni)։ Թյուրիմացության տեղիք չտալու համար նշենք, որ Իգանին և Իյանին նույնանում են թե՛ անուններով, թե՛ տեղայնացմամբ[27]։

Ijani տեղանունն է ընկած ոչ միայն հայկական Անի տեղանվան, այլև Ստրաբոնի ավանդած այնիան ցեղանվան (ավելի ճիշտ էթնիկոնի) հիմքում։ Երկրորդ դեպքում բառարմատին կցվել է -an մասնիկը (*ijani-an>*janian)։ Այս վերջինս լինելու է հին թրակյան լեզուների այն մասնիկը, որի միջոցով տեղանուններից կերտվում էին էթնիկոններ՝ դրանք կրած վայրերի բնակիչներին նշող անվանումներ[28]։

Մեր *Janian էթնիկոնի հունական Αἰνιανες ձևով տառադարձված լինելու առնչությամբ պետք է հիշել հին հունական իրականության մեջ լայն տարածում գտած այն երևույթը, համաձայն որի՝ օտար անունները հաճախ տառադարձվում էին բնօրինակի հետ ծագումնաբանական որևէ ընդհանրություն չունեցող, բայց հունական միջավայրում հայտնի դրանց մոտ ձևերով։ Հավանաբար, տվյալ դեպքում, խնդրո առարկա էթնիկոնի հունական տառադարձությունը կրում է հին հույներին քաջ հայտնի թեսալական Αἰνιανες էթնոնիմի ազդեցությունը։

---

23 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 13։

24 Գր. Ղափանցյանը հյուսիս-արևմտյան Շիրակը մասն էր համարում Իգանի երկրի (Гр. Капанцян, Историко-лингвистические работы, т. II, стр. 106).

25 Ս. Տ. Երեմյան, «Ուրարտուի պետությունը և հարևան երկրները մ. թ. ա. 8—7-րդ դդ.» («Հայկական ՍՍՌ ատլաս», էջ 102-ի քարտեզը) և «Ուրարտուի պետությունը (870—590 թթ. մ. թ. ա.)», «Հայ ժողովրդի պատմություն», հ. I-ի քարտեզը։

26 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 56—57, 420; Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 13։

27 Н. В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 419—420։

28 Հմմտ. թրակիական Τυρανοί, Δραϊζανοί, Ἀρβιλανοί էթնիկոնները, որոնց համար հիմք են հանդիսացել Τύρας, *Δραϊζ- և Ἀρβιλοι տեղանունները (О. Н. Трубачев, Ран-

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասում հաստատված այնիանների *բնակության հիմնական շրջանը եղել է ուրարտական արձանագրությունների* Ijani (Igani) *երկիրը, հենց որի անունով էլ նրանք կոչվել են* այնիան-*ներ (ավելի ճիշտ՝* *janian<*ijanian<*Ijani-an)։ *Ամենայն հավանականությամբ այս երկիրը ներառում էր ոչ միայն Հյուսիսային Վանանդը, այլև հարևան Շիրակի այն մասը, որտեղ գտնվում էր նրա* Ijani *անունը պահած Անի բնակավայրը։*

Igani (Ijani) *երկրանվան և* iganieḫi *էթնիկոնի գոյության փաստը մ. թ. ա. VIII դ. ուրարտական արձանագրություններում, ցույց է տալիս, որ* այնիան *(*ijani-an=*ուրարտ.* igani-eḫi) *անվամբ հայտնի եկվոր էթնիկական տարրի հաստատումը Վանանդում և հյուսիս-արևմտյան Շիրակում տեղի է ունեցել ոչ թե մ. թ. ա. VIII—VII դդ. ընթացքում, այլ մ. թ. ա. VII դ. նախորդած ժամանակաշրջանում։*

Հայերենակիր էթնիկական տարրին (հայերի լեզվական նախնիներին) ազդակից և հյուսիսից Հայկական լեռնաշխարհ թափանցած հին թրակյան ցեղերի՝ հայ ժողովրդի էթնոգենեզիսին բերած մասնակցության տեսակետից ուշագրավ են հայոց լեզվի տվյալները։ Հիշենք, որ հայերենում ի հայտ է գալիս մի բաղադրատարր, որը, հնդեվրոպական ծագում ունենալով հանդերձ, նրա բուն միջուկին չի պատկանում։ Ըստ Գ. Ջահուկյանի, այն կազմող բառերը հայերենի մեջ հայասական և թրակյան լեզուներով խոսած էթնիկական տարրերի կատարած ներդրումներն են[29]*։*

Խնդրո առարկա շրջանների համար այս առումով որոշակի հետաքրքրություն է հարուցում Վանանդ *տեղանունը։ Չնայած Խորենացին այն բխեցնում է շատ ավելի ուշ Վանանդի տարածքը թափանցած բուլղար գաղթականության առաջնորդի* Վունդ *(սեռ.* Վնդայ) *անունից*[30]*, սակայն, Գր. Ղափանցյանը և Գ. Ջահուկյանը, իրավամբ,* ~~Վանանդ~~*-ը դասում են* -անդ *(<հ.-ե.* -u̯ent-=-*uont-) *տեղանվանակերտ մասնիկը պարունակող հայկական* Հաբանդ, Մառանդ, Եռանդ *և այլ տեղանունների շարքը*[31]*։ Հիշենք, որ* Վանանդ *անունով բնակավայրեր կային նաև Սյունիքի Քաշունիք (Միւս Բաղք) և Երնջակ գավառներում*[32]*։*

Այս նույն առիթով ուշադրության է արժանի նաև Վանանդի տարածքով հոսող ամենամեծ գետի (այժմյան Կարսաչայի) Ախուրեան *հին անունը։ Ուրարտական արձանագրություններում* Aḫuriani *ձևով այն հանդես է գալիս որպես տեղանուն (այդպես էր կոչվում Աշտուխինի երկրի բնակավայրերից*

нне славянские этнонимы—свидетели миграции славян, «Вопросы языкознания», М., 1974, № 6, стр. 58—59, *Գ. Բ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 69)։*

29 *Գ. Բ. Ջահուկյան, Հայասայի լեզվի հնդեվրոպական ծագման վարկածը («Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 108)։*

30 *«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 109։*

31 Гр. Капанцян, Историко-лингвистические работы, т. II, стр. 120; Г. Б. Джаукян, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964, стр. 19.

32 *«Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 376, 378։*

մեկը)[33], սակայն Aḫuriani-ի նախապես գետանուն լինելու մասին է խոսում ինչպես նրա հայկական զուգահեռը (Ախուրեան գետանունը), այնպես էլ նրա aḫ- բաղադրիչը։ Վերջինս իր զուգահեռն ունի մի կողմից հայ-պոնտական Ծանախ (կամ Ծանախոյ ձոր)[34], իսկ մյուս կողմից հունա-պելասգյան, թրակյան և փռյուգա-փոքրասիական ծագմամբ այնպիսի գետանուններում, ինչպիսիք են՝ 'Ἀχέρων, 'Ἀχελῷος, 'Ἀχέλης, ''Ἴναχος, Timachus և այլն[35]։

Վ. Գեորգիևը հայերենում զանազանում է երկու լեզվաշերտ՝ փռյուգա-արմենական և թրակա-միսիական։ Վերջինիս գոյությամբ է նա բացատրում բուն հայերենի հնչյունաբանության տեսակետից ոչ օրինաչափ այնպիսի անցումներ, ինչպիսիք են՝ ակն <Հ.-ե. *ok^{u}-, անուն <Հ.-ե. onomno-, աղի <Հ.-ե. *ḫoụl- և այլն (այսինքն՝ երբ Հ.-ե. o-ն հայերեն համապատասխան բառերում վերածված է ոչ թե ո-ի, այլ ա-ի)[36]։

Ամերիկացի գիտնական Ջ. Գրեպինը հավանական է համարում հայերենում դակերենից փոխառյալ մի շարք բառերի գոյությունը։ Նա գրում է. «Հայերեն այդ բառերի անմիջական հնդեվրոպական ծագումը հնարավոր չէ կամ, լավագույն դեպքում, անհավանական է, քանի որ դրանց բաղաձայնական համակարգը շեղվում է հայերենի հնչյունական օրինաչափ փոփոխություններից, բայց դրա փոխարեն ամբողջովին համապատասխանում է դակերենի հնչյունական զարգացման օրինաչափություններին»[37]։ Հայերենում դակերենին մոտ լեզվաշերտի գոյությունը, նկատի առնելով Դակիայից Հայաստանի ունեցած հեռավորությունը, պետք է բացատրել դակերին մոտ ազգակից հին թրակյան էթնիկական ինչ-որ տարրի Հայկական լեռնաշխարհում հայտնվելով և այստեղ հայ ժողովրդի էթնոգենեզիսին նրա բերած մասնակցությամբ։

Դակերին մոտ ազգակից էթնիկական այդ տարրի Դակիայից (կամ նրա հարևան շրջաններից) դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արտագաղթի համար, տրերների և կիմերների նման, ավելի ընդունելի է հյուսիսաեծովյան ուղղությունը (հարավային Ուկրաինայի և Կովկասի վրայով), քան հարավսևծովյանը (Բալկանյան և Փոքրասիական թերակղզիների վրայով)։ Վերջին առիթով որոշակի հետաքրքրություն են հարուցում հին Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջաններում պահպանված Ցուրտաւ (սեռ. Ցուրտաւայ) և Պարտաւ (սեռ. Պարտաւայ) տեղանունները։ Սրանց -տաւ(այ)

---

33 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 32, Н. В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 200, 201։

34 Ծանախ գետանունը ծան- և -ախ բաղադրիչների տրոհելը ճշմարտացի է նաև նրանով, որ գետանվան ծան- բաղադրիչը նույնական է ծան (ճան) ցեղանվան հետ։ Հիշենք, որ Ծանախ (այժմ՝ Խարշիտ) գետը գտնվում էր արևելյան Պոնտոսում, իսկ վերջինս սահմանակից էր ծան-ճանների երկրին (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 56 և քարտեզը)։

35 Բերված գետանունների ah- բաղադրիչները սերում են Հ.-ե. *ak^{u}- «ջուր, գետ» արմատից (Գ. Բ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 97, В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, стр. 94, 139, 271).

36 В. Георгиев, Тракийският език, София, 1957, стр. 77—83, его же, Исследования по сравнительно-историческому языкознанию, стр. 143.

37 Ջոն Ա. Կ. Գրեպին, Դասական հայերենի դակերենից փոխառյալ տարրերի ուսումնասիրության փորձ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 4, էջ 77)։

<-*դաւ(այ) բաղադրիչները պետք է նույնական լինեն Դակիայի մի շարք տեղանուններում (օրինակ՝ Zermidava, Burridava, Καπίδαυα, ʼΡαμίδαυα, Ζαργίδαυα)[38] առկա դակերեն *dava «քաղաք» բառի հետ[39]։

Հատկանշական է, որ Ցուրտավը գտնվում էր Հյուսիսային Գուգարքում, որտեղ, ինչպես տեսանք, ժամանակին գոյություն ուներ կիմերական և տրերական բնակչություն, իսկ Պարտավը՝ Ուտիքում։ Այստեղ, ըստ Ստրաբոնի, բնակություն էր հաստատել նաև եկվոր այնիանների մեկ ուրիշ հատվածը[40]։ Պարտավից արևմուտք ընկած շրջանում ժամանակին գոյություն է ունեցել նաև տրերական բնակչություն։ Սրանց ցեղանվան մի տարբերակն է Ս. Երեմյանը տեսնում «...նույն տեղում գտնվող Տռի գավառի անվան մեջ (ուրարտ. Teriani, միջին դարերում Ջրաբերդ գավառը)»[41]։

Այժմ նորից Իգանի երկրի մասին։ Պարզվում է, որ այս ցեղային երկիրը հետագայում ևս պահպանել էր էթիոնի ցեղամիության մեջ մտած մյուս երկրների (հատկապես դրանցից արևմտյանների) նկատմամբ ունեցած առաջնային դիրքը։ Հայտնի է, որ հետագա Բասյան (Բասեան) գավառին համապատասխանած Տարիունի երկիրը[42], ուրարտական արձանագրություններում վերջին անգամ հիշատակվում է Արգիշտի I-ի մ. թ. ա. 773 թ. արշավանքի նկարագրության մեջ։ Այս փաստից ելնելով Ն. Հարությունյանը եզրակացնում է, որ հարևան Զաբախայի (և, հավանաբար, Աշտուխինի)[43] նման Տարիունին ևս ընդգրկվել էր Իգանիի մեջ։ «Առանց հետագա հզորացման և իր կազմի մեջ հարևան, երբեմնի ինքնուրույն, պետական միավորների ընդգրկման,— գրում է նա,— Իգանի երկիրը դժվար թե կարողանար դիմանալ սարգուրյան զորքերի.

---

38 «Атлас по българска история», София, 1963, стр. 3—4.

39 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 4, էջ 75։

40 Strabo, XI, 14, 14. Այս տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են հարուցում Արաքսի ստորին հոսանքի ձախափնյակի Փայտակարան և աջափնյակի Աղթանք բնակավայրերի անունները (վերջինս Փավստոս Բուզանդը հիշատակում էր «յԱղթանս» ձևով, այժմ ավերակ է և կոչվում է Ալթան)։ Թերևս, Փայտակարան (Փայտ-ա-կարան) և Աղթանք (Աղթան-ք, Ալթան) տեղանունների հիմք-բաղադրիչներին կարելի է հանդիպել թրակյան Παιτοι (Παιτ-οι) և ʼʼΑλοαννης (ʼʼΑλοαν-ης) տեղանունների մեջ (վերջիններիս վերաբերյալ տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 69, 78)։

41 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 92։ Ս. Երեմյանը տրերների ցեղանունն է տեսնում նաև Տրտու գետանվան մեջ (նույն տեղում)։ Այս դեպքում պետք է ենթադրել, որ գետանունը նախապես ունեցել է *Տրիտու կամ *Տրի-ուտու տեսքը (համեմ. Տրի և trer <*tri-ar, որից էլ Thriare և Թրիալ-եթի)։ Ինչ վերաբերում է գետանվան -(ու)տու բաղադրիչին, ապա հեշտությամբ այն կարելի է նույնացնել թրակերեն *utō, *utu (<հ.-ե. *ŋdō(r) «ջուր») բառի հետ, որը և ընկած է Դանուբի թրակիական վտակներից մեկի Utus, Οὖτως անվան հիմքում (Д. Дечев, նշվ. աշխ., էջ 8, В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, стр. 123, 131, 260).

42 Տարիունի երկիրը տեղադրվում է Արաքսի վերին հոսանքի ձախափնյակում, այժմյան Էրզրումից հյուսիս-արևելք (Ս. Տ. Երեմյան, նշված քարտեզները)։ Նրա անունն է պահել նույն շրջանում տեղադրվող հին հայկական Դարույնք (Դարոյնք) բնակավայրը (Н. В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 408 և «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 309, 372, 420)։

43 Նույնպես էթիոնի ցեղամիության մեջ մտած Աշտուխինի երկիրը բռնում էր հետագա Վանանդի հարավը՝ հիմնականում այժմյան Սարիղամիշ և Կարս քաղաքների միջև ընկած տարածքը (Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, էջ 171, Ս. Տ. Երեմյան, նշված քարտեզները, Н. В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 200—201)։

շեշտակի հարվածներին, երբ այդ նույն ժամանակ երբեմնի բավականին հզոր Դիաուխի ցեղամիությունը վերջնականապես դադարեցրել էր իր գոյությունը»[44]։

Նախկին Իգանի, Աշտուխինի և Տարիունի երկրներից ավելի ուշ մեկ ամբողջություն կազմված լինելու մասին է կարծես խոսում հետևյալ փաստը ևս։ Հայտնի է, որ հին հայերը Բասեան էին կոչում նախկին Տարիունի երկիրը, իսկ Վերին Բասեան (նաև Անփայտ Բասեան)՝ նախկին Իգանի և Աշտուխինի երկրներից կազմված հետագա Վանանդը։ Մովսես Խորենացու հաղորդումներից մեկի համաձայն հայոց Վաղարշակ արքան «...իշանէ ի տեղիս խոտաւետս մերձ ի սահմանն Շարայի. զոր հինքն Անփայտ եւ Վերին Բասեան կոչէին. իսկ յետոյ վասն հատուածի Վղընդուր Բուլղարայ Վնդայ, բնակելոյ ի տեղիսն՝ յանուն նորա անուանեցաւ Վանանդ...»[45]։ Ն. Ադոնցը ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ եթե 450 թ. կազմված մի գրության մեջ, ի թիվս այլ բարձրաստիճան հոգևորականների, հիշատակված են Բասյանի և Վանանդի եպիսկոպոսները, ապա 505 թ. կազմված նույնատիպ մեկ ուրիշ գրության մեջ նրանց փոխարինել են երկու Բասյանների եպիսկոպոսները[46]։ Ըստ երևույթին, վաղ հայկական ժամանակաշրջանում Աշտուխինի և Տարիունի երկրների Իգանիի գլխավորությամբ ստեղծված մեկ ամբողջության (վաղ պետական տիպի միավորման) մեջ ընդգրկման գործում որոշիչ դեր են խաղացել ինչպես այդ ցեղային երկրների հարևանության և ժամանակին էթիունի ցեղամիության մեջ մտած լինելու հանգամանքները, այնպես էլ նրանց բնակչության իշխող էթնիկական տարրերի («թրակիա-կիմերական» ծագմամբ) ազգակցության հանգամանքը։

Այսպիսով, թրակերենին և դակերենին մոտ բաղադրատարրերի առկայությունը հայերենում և հին Հայաստանի տեղանուններում պետք է արդյունք համարել նաև հյուսիսսևծովյան ճանապարհով Հայկական լեռնաշխարհ թափանցած հին թրակյան ցեղերի հայ ժողովրդի էթնոգենեզիսին բերած մասնակցության։ Ավելացնենք, որ սրանց մեջ իրենց տեղն էին ունեցել նաև այնիանները՝ ուրարտական և վաղ հայկական ժամանակաշրջանների Վանանդի բնակչության եկվոր նախնիները։

ДРЕВНЕФРАКИЙСКИЙ ЭТНИЧЕСКИЙ ЭЛЕМЕНТ НА ТЕРРИТОРИИ ВАНАНДА

САРКИС ПЕТРОСЯН

Резюме

Урартские клинообразные надписи, начиная с конца IX века до и. э., на севере Армянского нагорья упоминают племенное объединение Этиуни. Известно, что страна Игани (Ийани), которая включала северную часть исторического Вананда, входила в это объединение. Обитавшие здесь иганийцы (урарт. *igani-eḫi) или ийанийцы (др. фрак. *ijani-an > греч. Αἰνιανεσ), вероятно, принадлежали к «царскому племени» объединения Этиуни.

44 Н. В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 408, ծան. 321։

45 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 109 (ընդգծումները մերն են—Ս. Պ.)։

46 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 330, 332.

Согласно урартским надписям, иганиец Диуцини (Diuşini Iganieḫi), современник Сардури II (764—735 гг. до н. э.), являлся царем Этиуни. Имя его индоевропейского, точнее древнефракийского происхождения (ср. фрак. Diuzenes = греч. Διογένης). Индоевропейское происхождение имеет также топоним Vanand (*Վանանդ*), где, как и в топонимах Marand, Haband, Erand и др. древней Армении, налицо топонимический суффикс -and индоевропейского происхождения (-and < и-е. u̯ent-, -u̯ont-).

Как в VIII веке до н. э., так и в эпоху, предшествовавшую ему, «фрако-киммерийские» племена через Кавказ вторглись в северные районы Армянского нагорья и утвердились там (в том числе и на территории Ванада). Эти племена, в числе которых находились и пришлые предки обитателей исторического Ванада, впоследствии, наряду с «фрако-фригийскими» племенами, принимали активное участие в формировании древнеармянского этноса.